

# ԼՈՆՏՈՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԵՏԵԻԻ

Լոնտոնեան մամուլը, ինչպէս նաեւ հեռատեսիլը, կը շարունակեն հետեւիլ Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ պատահած դէպքերուն: Անոնք օրը օրին կու տան դէպքերու շարադրանքը, որուն հետ դժուար է քայլ պահել, քանի որ մերը երկշարաթաթերթէ

Ըստ *ԹԱՅՄՁ* ին, Երեւանի մէջ երբ ժողովուրդը վերհասու կ'ըլլայ սահմոկեցուցիչ լուրերուն, զայրոյթով կը լեցուի: Հազարաւորներ, անոնց մէջ սեւազգեստ կիներ, սգոյ թափոր մը կազմելով կը բարձրանան ծիծեռնակաբերդի յուշհամալիրը եւ ծաղկեպսակներ կը դնեն ՄԵԾ ԵՂԵՌՆԻ, ինչպէս նաեւ *Սու՛կայիթի* ու ատրպէյճանական միւս շրջաններուն մէջ ինկած զոհերու յիշատակին:

Ժողովուրդը համախմբուած է Երեւանի Օֆերայի շէնքին մօտ եւս: Հաւաքուածներուն առջեւ ելոյթ ունենալով դերասան, ՆԱՀԱՊԵՏ ֆիլմի գլխաւոր հերոս՝ Սօս Սարգիսեան *Սու՛կայիթի* զոհերը նկատած է Հայկական պահանջատիրութեան նահատակները:

Լոնտոնի հեռատեսիլի 4-րդ ալիքը, անցեալ շաբաթ հարցազրոյց մը կազմակերպեց ամերիկահայ Փրոֆ. Տիգրան Գուլումճեանի հետ: Փրոֆ. Գուլումճեան, որ դասախօս է Բալիֆորնիոյ համալսարաններէն մէկուն մէջ, շուրջ կէս ժամ խօսեցաւ Ղարաբաղի ու հայկական պահանջատիրութեան մասին, կատարելով տրամաբանական վերլուծումներ եւ մեկնաբանութիւններ:

B.B.C., իր մարտի 11-ի առաւօտեան հաղորդումներու ժամանակ յայտնեց, թէ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարները ժամանած են Մոսկուա, ժողով գումարելու համար Կորպաչովի հետ:

Կորպաչով, իր մտահոգութիւնը յայտնած է դէպքերու գահավէժ ընթացքին համար: